


ՀԱՅՊԵՏԱՊ

№ 3 Ա. 1/3

«20» նոյեմբերի 1928 թ.

Ծերեկան



ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ № 3

1 MAR 2010

## ՊԵՏԱՊԻ ԲՈԼՈՐ ԳՈՐծԱԿԱԼՆԵՐԻՆ

Հարակից ուղարկելով կոպարային տպահովագրության նորերս վերամշակված ընդհանուր կանոնները, առաջարկվում է հետազյում անասունների անկման տպահովագրական վճարների լուծմարքման բնթացքում, խստիվ դեկավարին միայն հիշված ընդհանուր կանոններով և սույն շրջաբերականով:

ՏԵՐԵՊ. Ա. Ե.

1928



Գրատիպ. № 1488 (բ) Տիրամ 300
Հայոց գրադառների 2-րդ տոլ. պատ. № 875

## ՊԵՏԱՊԻ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

### § 1.

Անասունի անկման ակտը կազմում են Գիլորհուրդները, անասնաբուժները կամ Պետաղի գործակալները անպայման 2 վկաների ներկայությամբ և անասունի անկումից վոչ ուշ քան 2 որվա ընթացքում:

Ակտի կազմելը հետին թվով չի թույլատրվում (կանոն § 32):

### § 2.

Ակտը կազմվում է անասունի անկման տեղում և ակտ կազմողները պետք ե անձամբ տեսնեն սատկած անասունի դիակը:

Ցեթե գիտելը կամ նրա մնացորդները անհնարին ե ներկայացնել, այդ գեղքում ակտում պետք ե մանրամասն կերպով ցույց տրված լինեն այդպիսի անհրաժենության պատճառները, իսկ անասունի անկումը պնտք ե հաստափած լինի վկաների ցուցմունքներով (կանոն § 36):

### § 3.

Կազմված ակտը պետք ե ստորագրված լինի Գիլորհորդի, յերկու վկաների՝ անասնատիրոջ վոչ ազգական՝ և անասնատիրոջ կողմից ու անպայման կնքված լինի Գիլորհորդի կնիքով:

### § 4.

Կազմված ակտը Գիլորհուրդը անհապաղ և ան-

միջապես ուղարկում ե Պետապի գործակալին և վոչ  
մի դեպքում ակտը չպետք ե տրվի անասնատիրոջ:

§ 5.

Յեթե անասունը գողացված է, վաճառված կամ  
կորած, վոչ մի ակտ կազմել չի հարկավոր:

§ 6.

Յեթե անասունը մորթված ե ծերողթյան, կու-  
րության հետևանքով, կամ այլ տնտեսական նկատա-  
ռումներով—նույնպես ակտը չի կազմվում:

§ 7.

Յեթե սատկած անասունը փոքր ե-խոշոր յեղ-  
ջյուրավորը 1 և  $1/2$  տարուց, իսկ ձիերը, ջորիները,  
եշերը և ուղտերը 2 և  $1/2$  տարուց—նույնպես ակտ  
չի կազմվում:

§ 8.

Ակտերը կազմվում են մի գույնի թանաքով և  
մեկ ձեռագրով: Ակտի բոլոր կետերին պետք է տրվին  
ճշգրիտ և վորոշակի պատասխաններ, առանց բա-  
ցերի:

§ 9.

Պետապը պատասխանատու յե անասունների  
անկման վնասների համար միայն հետեւյալ դեպքե-  
րում:

ա) Յերբ անասունը սատկում է զանազան տե-  
սակի հիվանդություններից, նույնպես անհաջող ծը-  
նընդարերությունից (կանոն կ. 1 § 1):

բ) յերբ անասունը սատկում է զանազան տե-  
սակի դժբախտ պատահարներից, որ. 1) զաղանների  
կողմից պատառլուսումից 2) հրդեհից սատկելուց, 3)

կայծակահարությունից, 4) ստար առարկաների կուլ-  
տալուց, 5) թունավորումից, 6) շնչահեղձությունից,  
7) սարից ընկնելուց, 8) վոտի կամ մարմնի ուրիշ մա-  
սերի կոտրվելուց, 9) մի անասունի կողմից մյուսին  
յեղջյուրահարումից, 10) պատահական գնդակով  
սպանվելուց, 11) շենքի փլվելուց, 12) ջրհեղեղից, 13)  
քարերի և ձյունի փլուզումից, 14) յերկրաշարժից, 15)  
ջրհորի մեջ ընկնելուց, 16) կամուրջի կոտրվելու դեպ-  
քում, վայր ընկնելուց, 17) ելքաբարական հոսանքի  
հարվածից, 18) գնացքի կամ պատոմորիկի տակ ընկ-  
նելուց, 19) առհասարակ բոլոր այն դեպքերից, յերբ  
նըանք պատահմամբ և անսպասելի յեն յեղել և ար-  
տաքին պատճառների գործողության արդյունք են  
հանգիստացել (կանոն. կ. 2 § 1):

գ) Յերբ սատկացվում են անասնարուժական  
սանիտարական հակողության որգանների կարգա-  
դրությամբ, վարակիչ հիվանդությունները պարզելու  
և վերջ տալու նպատակով (կանոն. կ. 6 § 1):

դ) Մորթելուց անբուժելի հիվանդության պատ-  
ճառով (անպայման անասնաբուժական պերսոնալի  
թույլատվությամբ), վորի ժամանակ առաջանուած և  
անասունի բոլոր տեսակի արտադրողականություն-  
ների լրիվ կորուստը (բանվորական, մասցու, կաթ-  
նատու և ցեղական (կանոն. կ. 1 § 3):

յե) Կատարված կաստրացիայի (կրաելու) հետեւ-  
վանքներն վ (կանոն. կ. 1 § 4):

**Փանորություն—** Գյուղխորհուրդը իրավունք  
չունի թույլատվություն տալ հիվանդ ա-  
նասունին մորթելու բացի կ. «Բ» § 9-ում  
ցույց տված զանասան տեսակի դժբախտ  
դեպքերից:

§ 10.

Առևյն շրջաբերականի կ. «Բ» § 9-ում թված  
մահ սպառնացող դժբախտ պատահարների գեղքերում,  
Գյուղխորհուրդը պետք ե թույլատրի մորթել անա-  
սունը և պետք ե կազմի հատուկ ակտ, վորպիսին  
կցվում ե Պետապի ակտին:

§ 11.

Յեթե անասնաբուժը տիրոջը առաջարկում է  
մորթել հիվանդ անբուժելի անասունին, իսկ զյուղ-  
խորըուրդը—դժբախտ դեղքերի ժամանակ, և տերը  
չի կատարում ու անասունը սատկում և այդ հիվան-  
դությունից, այդ դեղքում ապահովագրողին տրվում  
և ապահովագրական գումարի միայն  $60^0/0$ -ը (տես  
կանոն. § 44):

§ 12.

Յեթե անասունը մորթված ե դժբախտ դեղքեր  
հետեւանքով և միսը ողտագործված ե, այդ դեղքում  
ապահովագրական վարձատրությունը տրվում և ա-  
պահովագրական գումարի  $60^0/0$ -ի չափով: (Կանոն.  
§ 44):

§ 13.

Ապահովագրական վարձատրությունը լրիվ չա-  
փով տրվում ե այն դեղքում, յեթե սատկած անա-  
սունների միսը տեղական բնակչության կողմից սո-  
վորաբար չի ողտագործվում իրրե սնունդ (ծանոթութ-  
կանոն. § 44-ի):

§ 14.

Սատկած անասունների համար ըստ պարտադիր  
ապահովագրության ապահովագրական վարձատրու-  
թյուն չի տրվում հետեւյալ դեղքերում:

ա) Յեթե հիվանդ անսուռենը, անգամ ձանը հի-  
վանդության դեղքում, մորթվում և առանց անաս-  
նաբուժի գիտության և թույլատրության:

Անասնաբուժի բացակայությունը չի կարող  
հիմք ծառայել ապահովագրական վարցատրություն  
տալու համար (հիմք Անդրժողկոմիսորնի վորոշումը  
4/6—27թ. № 31):

**Վաճառքարություն.**— Անասնաբուժի վկայականում  
ճշգրիտ և փորոշակի կերպով պետք ե ցույց  
տրված լինի հիվանդության տեսակը: Վկա-  
յականը տրվում և որինակի համար այս-  
պիսի բովանդակությամբ:

**Որինակ.** 1. Տրվում ե սույնը քաղ. Բարսեղ  
Մանուկյանին առ այն, վոր նրա կովը,  
կարմիր գույնի, տեղական ցեղի, 7 տա-  
րեկան, տառապում և վորովայնայի ջրու-  
ռուցքով (ջրզալաղով), ընդհանուր առ-  
մամբ հյուծված ե և ուժասպառ: Հիվան-  
դությունը անբուժելի յեւ:

Վորովհետեւ կովը կորցրել և կաթի և  
մսի արտադրողականությունները անասու-  
նը մորթել, կաշին ողտագործել, իսկ միսը  
թույլատրել սննդի համար, բացի վորո-  
վայնային խորշի վնասված մասերից:

**Որինակ.** 2. Տրվում ե սույնը քաղ. Ռուբեն  
Հակոբյանին առ այն, վոր նրա յեղը 9  
տարեկան, տառապում և խրոնիկական մը-  
կանային ըեկմատիզմով, հիվարդությունը  
արբուժելի յեւ և յեղը անպետք ե աշխա-  
տանքին: Թույլատրում և մորթել, կաշին  
ու միսը ողտագործել:

Բատ առաջին որինակի պետք ե տալ ապահովագրական վարձատրություն, վորովհետեւ անսառունը, տվյալ դեպքում կովը, կորցրել ե արտադրողականության բոլոր տեսակները (կաթի, մսի) և նրան սպառնուել ե անմիջական մահ:

Հստ յերկրորդ որինակի պետք և մերժել ապահովագրական վարձատրությունը, վորովհետև յեղը կորցրել և միայն բանվորական արտադրողականությունը, իսկ մսի արտադրողականությունը պահպանել և նրան չի սպառնում անմիջական ժահ ու հնարավոր ե գերացնել մորթելու հսմար։ Հետեապես անասնաբուծը իրավունք չուներ այդ դեպքում վկայուկան տալ անսասունը մորթելու։

Անասնաբուժի յեզրակացությունը անասունի  
մորթելու անհրաժեշտության մասին, անբուժելի և  
արտադրողականության բոլոր տեսակների (բանվո-  
րական, մսի, կաթի և ցեղական) կորուսաց առաջաց-  
նող հիվանդության հետևանքով, պետք է ճշգրիտ  
ձեակերպված լինի անասունի կենդանի յեղած ժամա-  
նակ դիտումի հիման վրա, մանրամասն ցույց տալով  
մորթելու պատճառը:

թ) Յեթե անասունը մորթված և կուրության հետևանքով, թեկուղ և անասնաբուժի թռչյլավորթյամբ:

գ) Յեթև անասունը մորթվակ և ծերության հետեւանքով, թեկուզ և անասնաբուժի թուլլափությամբ:

դ) Յեթե անտառնը մորթված և աշխատանքի համար անպետք լինելու հետևանքով թեկուզ և անասնաբռնդի թուլագիրությամբ, կամ այլ տնտեսական նկատառություններով,

յե) Յեթև անասունի սատկելու պատճառը յեղել

Ե ապահովագրողի չարամտությունը, այսինքն յեթե  
տերը դիտավորյալ կերպով սպանել ե անասունին ա-  
պահովագրական վարձատրյութուն ստանալու նպա-  
տակով (կանոն, § 47):

ժ) Յեթե վարձատրությունը ստանալու համար պահանջվ ներկայացված ե անսառնի մահվան որից 2 տարի անց, անդամ այն դեպքում, յեթե ակտը իր ժամանակին կտրվմած էր (կ. «Բ» § 47):

զ) Յեթև ապահովագրողը չի ներկայացրել ակտ կազմողներին սատկած անասունի դիսկր կամ նրա մնացորդները դիտումի համար (կանոն, կ. բԲ § 48):

б) Յեթե անտառունը մորթված և անհաջող ձբ-  
նընդարձելության հետեւանքով:

ը) Յեթե անսառունի մահվան մոմենտին ապահովգրողի տնտեսության մեջ տվյալ տեսակի ապահովգրական հասակ ունեցող կենդանիների թիվը, կլինիկի մեծ քանակը և ցուցակագրված, անկախ այն բանից, թե ում են նըսանք պատկանում:

Այս գեղըում ապահովագրական վարձատրությունը չի վճարվում առաջին, միաժամանակ սատկած անասունների համար, յեթե սատկած անասունների քանակը, համեմատած ապահովագրվածների թվի հետ, կազմում է անտառանների ներկա թվի ավելցուկը (Կանոն. կ. «Բ» § 48):

**Պահություն.** — Ապահովագրված անասունները բաժանված են 2 տեսակի, վորոնքի իրենց հերթին բաժանվում են խմբերի. 1-ին տեսակ-տավար, վորը բաժանվում է հիմեյալ խմբերի-փոքրասակներ, յեզներ զամբեներ:

2-րդ տեսակը բաժանվում է հետևյալ խմբերի. ձիեր, ջորիներ, ուզտեր և սեղերունք:

Յեթե, ըստ այդ տարատեսակ խմբերի, չկա համապատասխանություն, այդ ժամանակ անկման դիպրում ապահովագրական վարձատրություն չի տրվում:

**Արիթակ. — 1.** Յուցակագրված ե Սիմոն Դաղարյանի 2 ձի, 1 յեղ, 3 կով և 2 փոքրահասակ, ընդամենը 8 գլուխ, իսկ մեկ կովի անկումից հետո մնում է ընդամենը տնտեսության մեջ 7 գլուխ, բայց հետեւյալ կազմով 2 ձի, 1 յեղ, 3 կով և մեկ փոքրահասակ:

Այդպիսի դեպքում սատկած կովի համար ապահովագրական վարձատրություն չի տրվում, վորովհետև ապահովագրողը թագցրել ե մի կով, վորի համար պետք է վճարեր ապահովագին և նրա փոխարեն ավել ե ցույց տվել մեկ գլուխ փոքրահասակ:

**Արիթակ. — 2.** Սիմոն Մակարյանը ցուցակագրել ե 2 կով, 4 յեղ, իսկ սատկել են միաժամանակ 1 կով և 1 յեղ: Տնտեսության մեջ բացի սատկածներից մնում են՝ 2 կով, 3 յեղ և 2 ձի: Մակարյանին տրվում է ապահով, վարձատրություն միայն մեկ անասունի համար, վորովհետև մեկ կովը յեղել ե թագցրած: Զիերը թագցնելու համար, ապահով, վարձատրությունը չի մերժվում, վորովհետև այդպիսիները պատկանում են անասունների տարրեր տեսակին:

**թ)** Յեթե անասունը ապահովագրական հասակից փոքր ե (տավարը 1 և 1/2 տ. փոքր, ձիերը, ջորիները, եղերը և ուղտերը — 2 և 1/2 տ. փոքր):

ժ) Յեթե ապահովագրողը հրաժարվի իր իրավունքները հանձննել յերբորդ անձին, վորից կարող ե գանձված լինել ապահովագրական վարձատրություն (կանոն. § 51):

ի) Յեթե անասունը, վորը անասնաբուժի թույլատվությամբ յենթակա յե մորթելու, ապահովագրողը չի մորթում, այլ վաճառում է ուրիշ անձին կամ կաղմակերպության:

ն) Յեթե անասունը գողացված է կամ կորել ե անձիտ (կանոն. կ. «Բ» § 17):

Ո) Յեթե 14 որվա ընթացքում ապահովագրողը չհայտնի նոր զնված, տարվա ընթացքում ապահովագրական հասակին հասած և նրա տնտեսության մեջ մտած նոր անասունների, մասին (կանոն. կ. «Բ» § 28):

ու) Յեթե ապահովագրողը անասունի անկման մասին չհայտնի Պետապին կամ Գիլորհրդին, անասունի մահվան որից հաշված յերկու որվա ընթացքում:

**Թանօրություն.** — Քյուղիսորհուրդը ապահովագրողին տալիս ե Զիվ № 13 վկայական առայն, վոր իրոք ապահովագրողի կողմից հայտնված և յեղել ապահովագրական զեպքի մասին:

### § 15.

Ապահովագրողը պարտավոր ե ինչպես ապահովագրած, նույնպես և վոչ ապահովագրված անասունի հիվանդանալու բոլոր դեպքերում, 3 որից վոչ ուշ հայտնել Գիլորհրդին, իսկ հնարավորության դեպքում նաև մոտակա անասնաբուժին և, բացի դրանից ապահովագրողը պարտավոր ե ճշգրիտ կերպով կա-

տարել այն միջոցները, վորոնք ցույց են տրված անասնաբուժական –սանիտարական հսկողության կողմից, կամ վորոնք պահանջվում են պարտադիր վորոշումներով (կ. «Բ» §-31),

### § 16.

ա) Ապահովագրողը պարտավոր է յերկու շաբաթվա ընթացքում հայտնել Գիլորհրդին այն անառուների մասին, վորոնք նա նոր և ձեռք ըերել, առաջում ցուցակագրվածներից բացի, նմանապիս և պարտավոր է հայտնել իր տնտեսության մեջ կերցնելու համար ժամանակագրագիրես ընդունվածների մասին:

բ) Ապահովագրական հասակին հասած անառուների մասին:

գ) և իր տնտեսությունից գուրս յեկած անառուների մասին: Ապահովագրողի անառուների կազմի մեջ տեղի ունեցած փոփոխությունների մասին նրա կողմից ժամանակին՝ չհայտնելու դեպքում ապահովագրական վարձատրությունը չի տրվում (կանոն, կ. «Բ» § 48):

**Պահօրություն.**—Գյուղխորհուրդը ապահովագրողին տալիս է Զեկ № 13 վկայական առայն, վոր իրոք նրա անառուների կազմի մեջ տեղի յե ունեցել փոփոխություն, և վոր այդ փոփոխությունների մասին հայտնած է յեղել Գիլորհրդին:

### § 17.

Բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի ապահովագրական վարձատրությունը չգերազանցի սատկած անառունի իրական արժեքը,

### § 18.

Գյուղերում և իր շրջանի առանցքն ընակելի պունկտերում ունենալ մշտական հսկողություն անառուների մահացության ընթացքի նկատմամբ:

### § 19.

Գետավի պատասխանատվությունը սկսվում է այն մոմենտից, յերբ անառունը հասել է ապահովագրական հասակին և ցուցակագրված է:

### § 20.

Այն գեղքերում յերբ անառուների համար Գետավի պատասխանատվությունը սկսվում է զործառնական տարվա ընթացքում (այլ վոչ սկզբից), ապահովագրողից գանձման յենթակա ապահովագնի գումարը վորոշվում է հետևյալ չափերով՝

Յեթե անառունի վերաբերյալ Գետավի պատասխանատվությունը սկսվել է զործառնական տարվա առաջին յեռամյակի ընթացքում, ապահովագինը վորոշվում է տարեկան ապահովագնի յեթվ չափով:

Յեթե անառունի վերաբերյալ Գետավի պատասխանատվությունը սկսվել է զործառնական տարվա յերերորդ յեռամյակի ընթացքում, ապահովագինը վորոշվում է տարեկան ապահովագնի յերկու յերերորդի չափով:

Յեթե անառունի վերաբերյալ Գետավի պատասխանատվությունը սկսվել է զործառնական տարվա վերջին յեռամյակի ընթացքում, ապահովագինը վորոշվում է տարեկան ապահովագնի մեկ յերերորդի չափով:

### § 21.

Այն գեղքերում, յերբ ապահովագրությունը վերջանալու հետևանքով, ապահովագրողը իրավունք ունի

ապահովագինը հետ ստանալու, վերջինս հաշվարկվում  
է հետեւյալ չափերով:

Յեթե անասունի վերաբերյալ Պետապի պատաս-  
խանատվությունը վերջացել է գործառնական տարվա  
առաջին յեռամյակի ընթացքում, ապահովագինը  
վերադարձվում է տարեկան ապահովագնի յերկու յեր-  
րուգի չափով:

Յեթե անասունի վերաբերյալ Պետապի պատաս-  
խանատվությունը վերջացել է գործառնական տարվա  
յերկուրդ յեռամյակի ընթացքում, ապահովագինը  
վերադարձվում է տարեկան ապահովագնի մեկ յեր-  
րուգի չափով:

Յեթե անասունի վերաբերյալ Պետապի պատաս-  
խանատվությունը վերջացել է գործառնական տարվա  
վերջին յեռամյակի ընթացքում, ապահովագինը  
յենքակա չե վերազարձան:

### § 22.

Ապահովագրական վարձադրությունը տալու հա-  
մար հիմք և ծառայում միայն սկզբնական ակտը,  
վորը կազմված ե համաձայն սույն շրջաբերականի  
§ § 1,2 և 3-ի:

Մյուս բոլոր փաստաթղթերը, վորոնք տրված  
են ակտը կազմելուց հետո, հիմք ծառայել չեն կարող:

### § 23.

Ապահովագրական վարձատրությունը տրվում  
է գործակալների կողմից հրապարակորեն, տեղերուս  
այսինքն, այնտեղ, վորտեղ սատկել ե անասունը և  
միայն տուժած տնտեսության մեջ մնացած անա-  
սունների քանակի և անկման փաստի նախնական  
ստուգումից հետո:

### § 24.

Այս անձնավորությունների ցուցակը, վորոնց  
տրված ե ապահովագրական վարձատրություն, նույն-  
պես և այս անձնավորությունը, ցուցակը, վորոնց մերժել  
են, մերժման պատճառը ցույց տալով, պետք ե կա-  
խել գյուղիորհնորրում ամիսը 2 անգամ: Ցուցակի  
ստացման մասին Գիլորհուրդը գործակալին տալիս ե  
ստորագրություն:

Գյուղիորհնորհներին պետք ե տրվի ակտերի  
բանկների բավականաչափ քանակ:

**Մանորուբյուն.** — Երջանային գործակալը պար-  
տավոր ե հարկ յեղած ձեռվ հրահանգել  
գյուղիորհնորհներին ակտերը կազմելու կար-  
գի մասին:

### § 25.

Սատկած անասունի ակտի վրա անպայման  
պետք ե լինի գործակալի յեղակացությունը (մերժ-  
ման պատճառը կամ վճարումը):

### § 26.

Վարձատրությունը ստանալու մասին ապահո-  
վագրողի ստորագրությունը պետք ե վավերացվի  
Գիլորհորդի կողմից կնիքի դրոշմամբ, առանց վորի  
յելքը չի հաստատվում:

### § 27.

Վարձատրությունը ստանալու մասին ապահո-  
վագրողի ստորագրությունը պետք ե վավերացվի  
Գիլորհորդի կողմից կնիքի դրոշմամբ, առանց վորի  
յելքը չի հաստատվում:

### § 28.

Ակտերով վարձատրությունը վճարվում է ան-  
հապաղ բայց վոչ յերբեք 2 շաբթից ուշ: Ապահով-  
րական վեասուների հատուցման ուշացումը վորեիցե  
պատճառներով անթույլատրելի յի:

**Մանորուբյուն.** — Այս գեպերում, յերբ ապա-  
հովագրողը բացակայում է եւ



44.253

թյունը իր ժամանակին հի  
գործակալը պետք է այդպիսի դեպքը տա  
Գիւրին նշելու:

§ 29.

Վճարված և մերժված ակտերը № 7 տեղեկադրի  
հետ միասին Գրասենյակ են ուղարկվում 2 շաբաթը  
մեկ անգամ:

§ 30.

Ինչպես ակտերում նույնպես և վնասների մա-  
տյանում գործակալը պարտավոր է նշել գործակալու-  
թյան կողմից ակտերի ստանալու տարե ու ամսա-  
թիվը:

§ 31.

Պարտադիր ապահովագրության ընդհանուր կա-  
նոնների § 48-ի սույն շրջաբերականի § 14-ի կ. կ.  
«զ» «ը» «լ» և «ու»-ի խախտման բոլոր գեղգերում,  
գործակալը ակտերը իր յիզրակացությամբ ուղար-  
կում և Գրասենյակ, վորին իրավունք է արված այդ-  
պիսի ակտերով վճարել կամ մերժել:

Անդրադատապի վարչության  
Հայաստանի լիազոր՝ (ՊԵՏՐՈՍՅԱՆ)

Գյուղ բաժնի վարիչ՝ (ՍԱՐԳՍՅԱՆ)

